# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (10 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա- վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստա- տությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չա- փի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխ ան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստ աթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխ անատու անձը փաստաթղթերի բնօրինակն երը համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկա- յացված փաստաթղթերի ցանկն ամբողջա- կան չէ կամ առկա են թերություններ, մասնա- կիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ըն- դունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են մարտի 9-ից մինչեւ մարտի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրե- րից: Մրցույթը տեղի կունենա մարտի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 83-51-27 հեռախոսահամարով: